Փուճջը ՇԱԲԱԹ օրերը կը հրատարակուի :

Տարեկան բաժանորդագինն է երկու ես կես արծաթ Ւ՚ճիթ կանխիկ վճարելի , թե մայրաքաղաքիս ես իր արուարձանաց ես թե գաւառաց համար :

վեց ես երեք ամսոց համար ալ բաժանորդ կընդունուի :

Տեղական ես գաւառական թղթատարութեան ծախքը խմբագրութիւնը պիտի վճարէ :

Հատը 40 փարայ է, ես կգտնուի մասնաւորապես Պանճե-գարու ջրավաճառ ես գրավաճառ Պօղոս աղայի խանութը :

Ծանուցման տողը 3 դրուշ է մէկ անգամի համար : Աւելի աժան կըլլայ աւելի անգամներու համար :

Խմբագրութեան վերաբերեալ որ ես է գիր ուղղելի ատ. Տնօրէն-Տէր Հ. Ս. Ալատճատեան կ. Պոլիս Պալըգ-բազար Նաճիյէ խան վերի յարկ թիւ 16 :

ADRESSE

H. S. ALADJADJIAN

Directeur du journal Armenien Pountch
—16 Nafié-Han . Balouk-Pazar 16—
Constantinople

ԹԻՒ 1918 — Շ Ա Բ Ա Թ — 1884 ԴԵԿՏԵՄԲԵՐ 1

ԱԶԳԱՅԻՆ

Պաբէթպէական Ընդհանրական Ժողովն առ նուազն ամիս մի ևս պիտի յապաղի : Եթէ ներելի է ճշմարտութիւն դրել՝ իրաւունք ունինք դանդատելու , թէ այս յապաղման պատճառն են ազգային վարչութեան Կրօնական ու Քաղաքական ժողովները , մինչդեռ իրենք երբ ամիս մը յառաջ Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր թաղման հանդէսին յետոյ ի խառն նիստ դումարեցան , ի շահ և յօգուտ Ազգին անհրաժեշտ հարկ համարեցան հաստատութեամբ՝ պատրիարքական ընտրութեան գործը մինչև մէկ ամիս կատարել , և հետևաբար որոշեցին զգուշանալ այն ամեն կարգադրութենէ ու անօրինութենէն , որ կրնան այս կարևոր գործին յապաղման պատճառ լինել ի վնաս Ազգին : Արդ յաւալի է , որ խառն ժողովն՝ այս հարկն զգալով և այս որոշումն արտասնելով հանդերձ՝ ազգային Սահմանադրութեան հակառակ վարուեցաւ , և նախնի ժամանակաց մէջ ի գործ դրուած բացառիկ տնօրինութեանց հետևելով պատրիարքական տեղապահ չընտրեց ըստ օրինի , այլ Պատրիարքական Գեր. Փոխանորդ Հօր պաշտօն տուաւ ստորագրել վարչական ժողովոյ որոշումներն ու անօրինութիւնները , և ազգային ընթացիկ խնդրոց ու գործոց համար միջնորդ լինել ի մէջ Պատրիարքարանին և Բ. Դրան , առանց տեղապահ անունը կրելու և առանց վարչական ժողովոյ նախագահելու : Խառն ժողովն ամիս մը յառաջ ըրաւ այս անօրինութիւնը և փութացաւ տեղեկագրել առ Բ. Դուռն , բայց ահա Բ. Դուռը չընդունեց , և երբ քաջալերի ի պաշտօնէ դրից ի Պատրիարքարան , թէ պարտ է տեղապահ մը ընտրել ըստ տրամադրութեան ազգային Սահմանադրութեան : Հետևաբար , հարկ եղած է խառն ժողով դումարել առաջիկայ չորեքշաբթի , և ըստ օրինի տեղապահական ընտրութիւն կատարելով՝ տեղեկագրել առ Բ. Դուռն : Ասոնիկ այս պատճառաւ դեռ ամիս մի ևս կը յապաղի պատրիարքական ընտրութեան գործը : Կարելի է , որ լսելի առարկութիւնք լինին՝ Վարչութեան նախորդ տնօրինութիւնն արդարացընելու համար . բայց ամեն առարկութիւնե գեր ի վերոյ են՝ յանուն ազգային Սահմանադրութեան յարուցեալ առարկութիւնք , և բնաւ ներելի չէ՝ ազգային օրէնքը ըմհռաւալ , այլ պարտ և պէտք է անվթար պահել զայն՝ նմա՛ ըմհռաւալուն ուրիշ ամեն նկատում : Մեք չեմք ուզեր ասկէց աւելի գրել , և կանցնիմք՝ յայտնելով մեր մշտընջենաւոր խղճն , որ է օրինակեսի ուղղութիւն և անկեղծութիւն առնել ազգային վարչութեան ամեն գործոց ու ձեռնարկութեանց մէջ :

Մեր մեծարգոյ բարեկամն , Մկրտիչ Էֆէնտի Խաչիկեան Կարնեցի , որոյ՝ Վեհապետական Տ. Յարութիւն Ս. Արքեպիսկոպոսի կենսագրութեան վերաբերեալ նամակը հրատարակեցինք նախորդ թերթով , յանձնարարած է մեզ՝ յաւելուլ , թէ Նորին Գերապատուութիւնն Հայաստանի վերջին աղետալի սովուն դառն ժամանակաց մէջ ի խնամս մերայնոց հայրադորով հոգածութեամբ մեծ աշխատութիւն ու ծառայութիւն մատուցած , և սովելոց խնամատար կեդրոնական յանձնաժողովոյ ընորհակալեաց գրութեանց արժանի հանդիսացած է : Մկրտիչ Էֆէնտի Խաչիկեան միանգամայն յանձնարարած է մեզ՝ ուղղել , թէ վերջին պատերազմին ժամանակ կայսերական կառավարութեան կողմանէ Նորին Գերապատուութեան տրուած պատուանշանը չէ թէ Մէճիտիյէ այլ երրորդ աստիճանի Օսմանիյէ է , և Տ. Դէորգ Դ. Հայրապետին խնդրանօք՝ Ռուսիոյ կառավարութեան տուածն է Ս. Աննայի առաջին աստիճանի պատուանշան մեծ ժապաւէնով . թէ՝ Նորին Գերապատուութիւնն վերջին պատերազմին ժամանակ իր խոհեմ ու բանիբուն ընթացիք սիրելի հանդիսացած է վեհափայլ Ղազի Ահմէտ Մուխթար փաշային , և պատերազմէն յառաջ՝ վեհափայլ Ղազի Օսման փաշային , որ կայսերական չորրորդ բանակին սպայակուտի նախագահ էր այն ժամանակներն , և թէ՝ Տ. Յարութիւն Ս. Արքեպիսկոպոս 1847 ին սարկաւագ , իսկ 1850 ին վարդապետ ձեռնադրուած է :

— Կը կարծէինք , թէ Երուսաղիմայ նախորդ միաբաններէն Աթանաս վարդապետ , Ամեն. Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր դէմ դատ բանալուն համար կը ղրկայ՝ Պօղոսյ Հուդուդի դատարանէն ուղարկուելիք հրովարտակն եղեռնէն յետոյ , բայց կը տեսնենք որ չհաստատուիր մեր այս կարծիքն , որովհետև Աթանաս վարդապետ յամառ մնալով դիմած է էվգաֆի պաշտօնատան , և կը բողոքէ թէ Երուսաղիմայ Ս. Պատրիարքը բռնութեամբ դրած է իւր կալուածներն : Ահա այս դատին համար երկուշաբթի յիշեալ պաշտօնատան դատական խորհրդին ներկայացան Աթանաս վարդապետ , և Տ. Եսայի Ս. Պատրիարք Հօր կողմանէ կարապետ էֆէնտի Խաչատուրեան . սակայն վարդապետը չուզեց վարել դատն , յայտարարելով թէ փոխանորդ պիտի կարգէ , և խորհուրդն ըստիպուեցաւ օրաձգելը կը յուսամք թէ Հռոմէական ազգայնոց Պատրիարքարանն , յոր ապաստանեալ է Աթանաս վարդապետ , երթէ բարեհաճի լնամով հետապնդել Աթանասյ պատմութեանց ու գանգատանաց բուն ու հարազատ վիճակն , չպիտի հաւանի նորա դատարանէ ի դատարան դէգերելուն :

— Անցեալ շաբաթ օր Յանուարիուն հրատարակելով կեդրոնական վարժարանի բացման համար 1882 ին կազմեալ հանդանակիչ յանձնաժողովոյ անդամոց վերջին նորագոյն շարժմանց , և միանգամայն Ուսումնական խորհրդոյ կողմանէ առ Քաղաքական ժողովն մատուցեալ պաշտօնագրոյն վրայ , հետաքրքրութիւն յայտնած էինք , թէ Քաղաքական ժողովն ինչպէս պիտի լուծէ այս խնդիրն , որ հետզհետէ կը կնճռոտի : Արդ՝ կը ծանուցանեմք , թէ Քաղաքական ժողովը չորեքշաբթի աւուր շարաթական նստին մէջ առաջնութիւն տալով կեդրոնական վարժարանի բացման խնդրոյն , և լսելով հանգանակիչ մասնախմբի ներկայացուցիչ , կամ՝ ինչպէս կըսուի այժմ , Ներսէս Վարժապետեան Ուսումնարանի Ընկերութեան Գործադիր Մասնախմբի տեսնադպիր Մինաս Չերազ էֆէնտիի բացատրութիւններն , և ուշադրութեան առնելով Ուսումնական խորհրդոյ վերջին պաշտօնագիրն , հետևեալ որոշումն ըրաւ :

« Ազգային վարչութեան Քաղաքական ժողովն նոյնութեամբ կ՚ընդունի 1882 ին Հոդևոյս Տ. Ներսէս Ս. Պատրիարք Հօր նախաձեռնութեամբ դումարուած հանգանակող մարմնոյն կողմէ ի ձեռն գործադիր Մասնախմբին Նոյ . 16 Թուականաւ մատուցեալ յայտադիրն , և իւր գոհունակութիւնը կը յայտնէ առաջադրեալ ձեռնարկութեանց համար , սակայն նկատելով որ Ազգային Կեդրոնական վարժարանին բացման պէտքն անհրաժեշտ է և Հոգևոյս Սրբազան Պատրիարք Հօր ամենամեծ բաղձանքն եղած էր նոյն վարժարանին հաստատութիւնն , նկատելով որ զայն բանալու համար երկու հազար Օսմանեան ոսկւոյ դումարի մը պէտք կայ , որպէս զի Ղալաթիոյ կալուածոց մնատուկին պարտքը վճարուի , Ազգային Վարչութեան Քաղաքական ժողովն հարկ կը համարի որ կատարելի հանգանակութեան առաջին արդիւնքէն նախապէս 2000 ոսկւոյ դումար մը դրուի իւր տրամադրութեան ներքև՝ Ղալաթիոյ կալուածոց մնատուկին պարտքը վճարելու և կեդրոնական վարժարանին անմիջական բացուելն ապահովելու համար :

« Քաղաքական ժողովն արժան կը համարի նաև սոյն Ազգային վարժարանն նուիրել յանուն Հոգելոյս Ներսէս Սրբազան Պատրիարք Հօր , որ ջերմագին աշխատած էր անոր հաստատութեանն :»

Ուրախ եմք Քաղաքական ժողովոյ այս որոշման վրայ : Եթէ , Ներսէս Վարժապետեան դիշերօթիկ և ցերեկեայ Ուսումնարանի ընկերութեան հիմնադիր , կամ գործադիր մասնախմբի անդամ մեծապատիւ էֆէնտիներն վհանձնաբար բարեհաճին յարդել ազգային Վարչութեան այս որոշումն , ինչպէս պարտ և արժան է , Ազգը պիտի ունենայ թէ՛ կեդրոնական վարժարան մը ըստ փափաքանաց հանդուցեալ Ս. Պատրիարք Հօր , և թէ՛ դիշերօթիկ և ցերեկեայ նոր վարժարան մը՝ հիմնադրեալ ի մեծատանց Ազգիս :

Իսկ եթէ հակառակ ընթացից մէջ տեսնուին վերոյիշեալ էֆէնտիներն , դժբաղդաբար պիտի հաստատեն թէ իրենք ազգային օրինաւոր վարչութեան որոշմանց յարգող չեն , իրենք հանգուցեալ Սրբազանին բաղձանքը պսակելու անկեղծ նպատակ չունին : Ասոսիկ մեր Հայ մեծատանց վերհանձնութեան և անկեղծ կրթասիրութեան փառաւորիչ դեղեցիկ ասպարէզ մը՝ ըզր ազգային Վարչութիւնը մեծաւ իմաստութեամբ կը պարզէ իրենց առջև :

— Կրօնական ժողովն՝ որ երկուշաբթի չաբաթական նիստն ըրաւ ի ներկայութեան դրեթէ բոլոր ժողովականաց , պատշաճ դատեր է՝ ազգային լրագրաց ի պաշտօնէ յանուցանել թէ « Պատրիարքական ընտրութեան առթիւ լրագիրք ոմանք ընտրելի եպիսկոպոսներ ներկայացնելով առանձին մէկ յատկութիւն կը նշանակեն դրուատաւոք , թէ Օսմանեան պետութեան հաւատարիմ են : Կրօնական ժողովը չկրնար ներել որ այնպիսի իմն համարուի թէ այս ինչ կամ այն ինչ եպիսկոպոսն և եթէ հաւատարիմ են բարեհնամ կառավարութեան , մինչդեռ չկայ ո՛չ մի Հայ եպիսկոպոս , ո՛չ մի Հայ եկեղեցական ի Թուրքիա , որ հաւատարիմ չլինի Օսմանեան պետութեան և ղժողովուրդն չպահպանէ ի հաւատարիմ հպատակութեան : Հետևաբար , Կրօնական ժողովն հերքելով լրագրաց ոմանց այսօրինակ ջատագովութիւնները , կը յայտարարէ թէ այնպիսի գերութիւնք անտեղի են , և յանիրաւի կրնան ընդ կասկածանօք ձգել եպիսկոպոսական դասուն և նորա հովուութեան յանձնեալ Հայ Ազգին անդրդուելի հաւատարմութիւնն առ Օգոստափառ կայսերն Օսմանեան , և առ Նորուն բարեգործուլ կառավարութիւն » :

— Իզմիրի Արևելեան Մամուլ ամսագրի Հոկտեմբերի թերթին մէջ կարդացինք , թէ տեղւոյն Քաղաքական ժողովն գաւառական ընդհանուր ժողովոյ որոշմամբ ընտրհակալեաց գիր և ոսկի ժամագոյց մը նուէր գրկեր է Իզմիրի ազգայնոց երևելիներէն նշանաւոր Ճարտարապետ Մեծ. Մարկոսեան Գալուստ էֆէնտիի , ի փոխարէն անձնուէր ծառայութեան նորին՝ զոր մատուցեր է Ս. Հռիփսիմեանց վարժարանի վերաշինութեան առթիւ : Մարկոսեան Գալուստ էֆէնտի ընդունելի է այս գիրն ու նուէրն , առ Գեր. Առաքնորդ Սրբազանն գրելով թէ « Ազգակցացս « վտահութիւնը բաւական վար« ձատրութիւն մի կը համարէի , « իսկ Երեսփոխանական ժողովոյ « որոշման համեմատ Քաղաքական « ժողովին կողմէ տրուած ազգա« յին նուէրը մի իմ բոլոր ակնկա« լութիւններէս վեր էր : Շնորհա« կալութեամբ և քաղցր յուզման « ամենաբուռն ղգայմամբ ընդու« նեցայ այդ նուէրը : Թող հաճի « Ձեր Գերապատուութիւնը հա« ւատալու ազգային ժողովական « նաց որ պատրաստ եմ երախ« տադիտութեամբ և անձնուիրու« թեամբ ծառայելու Ազգին , ո« րուն մեծարոյ երեսփոխանք ան« կեղծ յարդանաց և մեծարանաց « այսքան բարձր վկայութեամբ « պատուեցին իմ դոյզն արժանի« քըս : Ձակատս դէպ յերկիր խո« նարհելով կը հայցեմ , Սրբազա՛ն « Հա՛յր , Ձեր օրհնութիւնն որ « թանկագին և սրբանուէր է և « որու Ջերմագին կը փափաքիմ « արժանի մնալ միշտ » : Անշուշտ Ճարտարապետին այս գիրը Գաւառական ժողովոյ վերջին նըստին մէջ կարդացուեր է ի մեծ գոհունակութիւն երեսփոխան Տեարց :

Իզմիրի Գաւառական ժողովը միանգամայն որոշեր է , որ յիշեալ վարժարանին վերաշինութեան վերակացու Ծանձնաժողովոյ անդամոց անուանք ոսկեղօծ տառերով արձանագրուին շրջանակի մը վրայ և պահուին վարժարանին մէջ , և թէպէտ Ծանձնաժողովոյ անդամք աւելորդ համարեր են դայս՝ գերելով թէ իրենց ազգային պարտաւորութիւնը կատարած են , սակայն Գաւառական ժողովն անհրաժեշտ համարելով իւր որոշման գործադրութիւնը , դիւանին յանձներ է գործադրել :

Մեծաւ հաճութեամբ տեսանք Իզմիրի Գաւառական ժողովոյ այս որոշումներն , և մեծաւ հաճութեամբ հրատարակեցինք : Իզմիր՝ որ յաճախ բարի ու գեղեցիկ օրինակներ ընծայած է մայրաքաղաքացւոց , ահա այս սիրուն օրինակին ալ կընծայէ : Հարկ է որ Թուրքիոյ Հայոց ազգային վարչութեան կեդրոնէն բղխին այսպիսի օրինակք : Ի կեդրոնի չկա՛յ պատիժ՝ ազգային պաշտամանց չըրջանակի մէջ յանցաւորաց համար : Նոյնպես չկա՛յ ո՛ր և է վարձ և փոխարինութիւն՝ անձնուէր վաստակաւորաց և արժանաւորաց հա-

ՀԱՅԿԱԿԱՆ

ՁԱՅՆԱԳԻՐ

1883 Տարի

Ամսագիր գրականության, գիտության և հասարակական կենաց

ԸՆԿԱԼՈՒԱԾ Ի ՂԱԶԱՐԻՑ

Տպագրատան մ. Գրիգորեան

(Ղազարեան)

ՂՎՎՎՍԿՈՂՎՄՈՒԹ

Տարեգրութիւն ամսոյն. — Գրիգոր Տաթեւացի. — Ժամանակագրութիւն. — Ներքին լուրեր. — Օտարոց երկրաց. — Հասարակական գործոց մասին. — Գրականութիւն. — Ազգային տնտեսութիւն. — Ներքին տնտեսութիւն. — Ծանուցումն. — Հրատարակութիւն. — Ծանուցումն առ բարեկամս եւ ընթերցողս։

Տպագրեալ 26 Դեկտեմբեր 1884.

(Թղթատպարան Ամենայն Հայոց)

Տեղեկութիւն ամսոյս 18 ի վիճակի ոստիկանութեան Ս. Էջմիածնի։

Ամսոյս 21 Դեկտեմբերի 1884.

Ի ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ

Ի ՍՊԱՍԱՒՈՐԱՑ ՊԱՏԱՐԱԳԱՏԱՐ

ՏԱՐԵԿԱՆ ՈՒՐԱԽՈՒԹԻՒՆ ՄԱՍԻՆ

Հայրենասէր ժողովուրդ մը միշտ ուրախ է, երբ իր զաւակներէն մէկը կամ մէկ քանին մեծ յաջողութիւն մը կ՚արձանագրեն, եւ ամբողջ ազգը կը մասնակցի անոնց ուրախութեան։ Ուրախ ենք, որ Հայ Դատի Գրասենեակը Ամերիկայի մէջ կրցաւ 23 տարուան ընթացքին 2000 է չափ ընտիր հայ ուսանողներ եւ ուսանողուհիներ դաստիարակել, որոնք ներկայիս ամերիկեան կեանքի տարբեր ասպարէզներու մէջ կը գործեն։ Ասոնց մէջ կան բժիշկներ, իրաւաբաններ, ճարտարապետներ, գիտնականներ, գրագէտներ, ուսուցիչներ, արուեստագէտներ, երաժիշտներ, վաճառականներ, գործարարներ, ֆաբրիկատորներ, արդիւնաբերողներ, հողագործներ, ինչպէս նաեւ զինուորներ եւ սպաներ։ Ասոնք բոլորն ալ ամերիկեան հասարակութեան մէջ ունին իրենց յարգանքի տեղը, եւ ամերիկեան ժողովուրդը կը հպարտանայ անոնցմով։ Ասոնք ամերիկեան ժողովուրդին հետ միասին կը մասնակցին ազգային կեանքի բոլոր գործերուն, եւ ամերիկեան ժողովուրդը կը վստահի անոնց։ Ասոնք ամերիկեան ժողովուրդին հետ միասին կը մասնակցին ազգային կեանքի բոլոր գործերուն, եւ ամերիկեան ժողովուրդը կը վստահի անոնց։ Ասոնք ամերիկեան ժողովուրդին հետ միասին կը մասնակցին ազգային կեանքի բոլոր գործերուն, եւ ամերիկեան ժողովուրդը կը վստահի անոնց։

ՃԱՐԱՎԱՆ

ՀՅՈՒՐԱՆՈՑ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ՎԱՃԱՌՔԻ ՀԱՄԱՐ ՀԱՐՈՒՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ի ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ

Ի ՀԱՄԱՐ ՀԱՆՐԱՅԻՆ ՎԱՃԱՌՔԻ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ